«Հաստատում եմ»

«Սուրբ Գրիգոր Լուսավորիչ»

պետական բժշկական քոլեջի

տնօրինական խորհրդի

նախագահ _____ Ռ. Մարգսյան

« 25 » հնվ 2021թ.

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

«ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ԲԿ ՓԲԸ_Ի

ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ

2021թ

ՀԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Ուսանողների կողմից դասախոսների գնահատման ձևաչափը հանդիսանում է դասախոսի կողմից ստեղծած դասընթացը և կրթական միջավայրը ուսանողների տեսանկյունից վերլուծելու և գնահատելու միջոց, ինչպես նաև դասախոսի կրթական գործունեության բարելավմանը խոչընդոտող գործոնները բացահայտելու հնարավորություն: Գնահատումն իրականացվում է դասախոսի և կրթական միջավայրի, ինչպես նաև դասընթացի գնահատման թերթիկների միջոցով:

1.2. Ուսանողների կողմից քոլեջի դասախոսների գործունեության գնահատումն իրականացվում է քոլեջի կանոնադրության և դասախոսական կազմի գործունեության գնահատման կարգի համաձայն:

1.3. Ուսանողների կողմիցքոլեջի դասախոսների գնահատման կարգը մշակվում է որոկի ապահովման ներքին ստորաբաժանման կողմից,ուսումնամեթոդական խորհրդի հետ համատեղ հաստատվում կառավարման խորհրդում:

2. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

2.1.Գնահատման իրականացման նպատակն է՝

- նպաստել ուսանողներդասախոս կրթական համագործակցությանը,
- խթանել դասախոսնի մասնագիտական աճը՝ առկա բացթողումները ճանաչելու միջոցով,
- շարունակաբար կատարելագործել քոլեջի դասախոսական աշխատանքների որակը:

2.2.Գնահատման կանոնավոր կիրառումը թույլ կտա զարգացնել դասախոսի մասնագիտական պատրաստվածության մակարդակը, նրա մասնագիտական գործունեության որակի բարելավումը՝ բարձրացնելով ուսանողների պատասխանատվությունը կրթական գործընթացի նկատմամբ:

3. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

3.1.Գնահատումը ներառում է չափանիշներ, որոնք հնարավորինս վերհանում են դասախոսի մասնագիտական պատրաստվածության ուսանողական ընկալումը: Այդ չափանիշներն են՝

- դասախոսի կողմից առարկայական ծրագրի ներկայացումն ու իրականացումը,
- դասախոսի կողմից կիրառվող գնահատման մեխանիզմները,
- դասախոսի կողմից մատուցվող նյութի բովանդակությունը,
- ուսանողների կողմից դասախոսի մատուցած նյութին արձագանքելու հնարավորությունը,
- դասախոսի՝ դասավանդման ոճը,
- դասախոսի պարտաճանաչությունը,

4. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

հատումն իրականացվում է յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո, ամփոփիչ յունից հետո:

Գնահատումն իրականացվում է հարցաթերթիկների միջոցով:

3. Գնահատման ընթացքում ուսանողներն իրենց սուբյեկտիվ կարծիքի հիման վրա գնահատում են դասախոսի կողմից ստեղծած կրթական միջավայրն ու դասընթացը:

5. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒՄԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

5.1. Գնահատման արդյունքները վերլուծության են ենթարկվում որակի ապահովման ստորաբաժանման կողմից:

5.2. Գնահատման արդյունքները պահպանվում են որակի ապահովման ստորաբաժանման մոտ: Գնահատման անհատական արդյունքները հրապարակվում են միայն տվյալ դասախոսի հետ անհատական հարցազրույցի շրջանակներում, որին մասնակցում են հիմնական վարչական աշխատակիցները, սակայն գնահատման տվյալները ընդհանրացված կարգով կարող են դառնալ խմբային քննարկման առարկա՝ նպատակ ունենալով հզորացնելու դասախոսների մասնագիտական կարողությունները: